Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 1044 - Ա որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր
## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված) |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (630 Սեքոնդ Ավենյու, Նյու-Յորք, ԱՄՆ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, քաղ. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության տակ գործող գիտական և կրթական հիմնարկներ:<br>Բնագավառը՝ գիտություն և կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 72,848,000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ:<br>Ընդամենը 28 գիտական խմբեր,<br>Ընդհանուրը՝ 112 գիտնականներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2022-20.05.2023 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ԳԿՀԱՀ կայքում, ՀՀ թերթերում, ՀՕՖ-ի ֆեյսբուկյան էջում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցները էլ. փոստով, անգլերեն լեզվով գրված իրենց գիտական աշխատանքները ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի մրցույթի անցկացման կազմ. |

| | | |
|---|---|---|
| | ֆինանսական միջոցների ծավալը | կոմիտեին (Հետազոտական խորհրդին), որը համապատասխան մասնագիտությունների առաջատար գիտնականներին է ներկայացնում առաջադրված աշխատանքները: Համադրելով առաջատար տարբեր գիտնականների եզրակացությունները ներկայացված գիտական խմբերի աշխատանքների վերաբերյալ[a] հայտարարվում են մրցույթի հաղթողները: Դրամաշնորհի հաղթողները ճանաչվելուց հետո ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքում նրանց հետ և վերահսկում պայմանների կատարումը:Գիտական ծրագրերի իրականացման ժամանակ՝ ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովը տարին 2 անգամ այցեր է կատարում գիտական խմբեր, աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով:<br><br>Ծրագրի 1-ին փուլ. 01.01.2022 թ. – 20.11.2022 թ.<br>Ծրագրի 2-րդ փուլ. 20.11.2022 թ. – 20.05.2023 թ.<br><br>Դրամաշնորհի առաջին կեսը տրվում է 2022 թ. մայիսին իսկ գումարի երկրորդ կեսը՝ առաջին փուլի ավարտին /նոյեմբեր 2022 թ./:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 72,848,000 ՀՀ դրամ, որից 67,200,000 ՀՀ դրամ գումարը տրամադրվում է 28 գիտական խմբերին, որպես դրամաշնորհ, յուրաքանչյուրին՝ 2,400,000 ՀՀ դրամ, իսկ 5,648,000 ՀՀ դրամ գումարը հանդիսանում է կազմակերպական ծախս, որն ներառում է.<br>Ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2,100,000 ՀՀ դրամ<br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48,000 ՀՀ դրամ<br>Կոմունալ ծախսեր 2,300,000 ՀՀ դրամ<br>Գրասենյակային պիտույքներ 1,200,000 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - բնական գազի ձեռքբերում՝ 1,600,000 ՀՀ դրամի չափով<br>- ջրամատակարարման ծառայության ձեռքբերում՝ 700,000 ՀՀ դրամի չափով<br>- ֆիքսված հեռախոսակապի ծառայության ձեռքբերում՝ 48,000 ՀՀ դրամի չափով<br>- գրասենյակային պիտույքների ձեռքբերում՝ 1,200,000 ՀՀ դրամի չափով |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է այդ թվում 5,648,000 ՀՀ դրամ՝ ընդհանուր արժողության 7.8%-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է.<br><br>Ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2,100,000 ՀՀ դրամ<br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48,000 ՀՀ դրամ<br>Կոմունալ ծախսեր 2,300,000 ՀՀ դրամ<br>Գրասենյակային պիտույքներ 1,200,000 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ ԳԱԱ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ